

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹԸ *)

(Դիցազնական վէպ)

XX

Քընեց էն գիշեր Ձէնով Օհանը:
Գիշերն երազում երևաց ծերին՝
Մըսրայ երկընքում արև ճառագած,
Սև ամպ էր պատել Սասմայ սարերին:
Սաստիկ վախեցած՝ վեր թռաւ տեղից.
— Վայ, կընիկ, ասաւ, մի ճըրճոգ արա.
Դընաց մեր մանուկ Դաւիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վըրայ:
— Տունըդ չը քանդւի, ասաւ կընիկը,
Ո՛վ գիտի Դաւիթն ուր է քէֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը քնած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում:

*) Տես «Մուրճ» № 4.

Այս պոէմը կազմելիս օգտուել եմ հետևեալ վարիանտներէց.

1. Պատուցի Դաւիթ կամ Մհերի Դուռ, Սրուանձտեանի. Կ. Պօլիս, 1874.

2. Դաւիթ և Մհեր, Մ. Աբեղեան. Չուշի, 1889.

3. Սասմայ ծռեր. Դարեգլին սարկաւագ. Թիֆլիս, 1892.

4. Սասմայ փահլեաններ կամ Թլոթ Դաւիթ և Մհեր. Բ. Խալաթեան.
Վաղարշապատ, 1899:

Քրնեց Օհանը՝ Վեր կացաւ դարձեալ.
 — Կրնիկ, Դաւիթը նեղ տեղն է ընկած. —
 Մըսրայ վառ աստղը շողում էր պայծառ,
 Մեր աստղը հազիւ ցոլքում դալկացած:
 — Ի՞նչ եղաւ քեզ, մնորդ, գիշերուան կիսին,
 Բարկացաւ վըրէն կրնիկն աղմուկով.
 Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
 Շուռ եկաւ, քրնեց խըռոված հոգով:
 Մի ուրիշ պատկեր աւելի ահեղ. —
 Տեսաւ երկնքի բարձրը կամարում
 Վառում էր Մըսրայ աստղը փառահեղ,
 Սասմայ աստղիկը սուզեց խաւարում:
 Զարթնեց վախեցած: — Տունըդ քանդւի՛ր, կին,
 Ես ո՞նց լսեցի քու էդ կարճ խելքին.
 Կորաւ մենմենակ մեր ջահէլն անտէր.
 Վեր կաց, շուտ արա, գէնքերըս մի բեր...

XXI

Ելաւ Օհան, գոմը մըտաւ,
 Զարկեց ճերմակ ձիու մէջքին.
 — Է՛յ ճերմակ ձի, մինչ երբ, ասաւ,
 Կը հասցընես Դաւիթի կուրին:

— Մինչեւ լուսը կը հասցընեմ,
 Ու ձին տըւաւ փորը գետին:
 — Մէջքըդ կոտրի, լուսն ի՞նչ անեմ,
 Լաշին հասնեմ ես թէ՛ նաշին:

Կարմիր ձիու մէջքին զարկեց.
 Սա էլ երիտ փորը գետին:
 — Զան կարմիր ձի, մինչ երբ, ասաւ,
 Կը հասցընես Դաւիթի կըուրին:

—Մի ժամի մէջ, կարմիրն ասաւ,
Կը հասցընեմ Դաւթի կըռւին:
—Լեզի՛ր դառնայ, սև ու մահ ցաւ,
Ինչ տըւել եմ քեզ էն գարին:

Հերթը եկաւ, սեին հասաւ:
Գետին չ'երիտ փորը սև ձին:
—Է՛յ, ջան Սևուկ, մինչ երբ, ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըռւին:

—Եթէ ամուր մէջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մէկ էլ ոտըդ շուռ տաս—
Կը հասցընեմ, ասաւ սև ձին:

XXII

Սև ձին քաշեց ձէնով Օհան,
Զախը դըրաւ ասպանդակին,
Այն էլ մինչև շուռ տար վրրան՝
Կանգնեց Սասմայ սարի գըլխին:

Տեսաւ Դաւթի նըժոյգն անտէր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքև Մըսրայ զօրքը ծըփում,
Ինչպէս անծայր, ծըփուն մի ծով:

Օխտը գոմշի կաշի հագաւ,
Որ չը պատուի իրեն զօռից,
Կանգնեց Օհան ու ամպի պէս
Գոռաց Սասմայ սարի ծերից.

—Դաւիթ, գոռաց, ճրտեղ ես դու,
Յիշիր խաչը պատարագի,

Սուրբ Տիրամօր անունը տունը,—
 Լոյսը դուրս եկ արեգակի...

Ձենը գընաց դըմբղըմբալով
 Դաւթի ականջն ընկաւ հօրում.
 —Հայ-հայ, ասաւ, հօրեղբայրս է,
 Սասմայ սարից ինձ է գոռում:

—Ո՛վ Մարութայ Աստածածին,
 Ո՛վ անմահ խաչ պատարագի,—
 Ձեղ եմ կանչել,—հասէք Դաւթին...
 Կանչեց, տեղից կանգնեց սաքի,

Էնպէս զարկեց ջաղացքարին,
 Քարը եղաւ հաղար կըտօր,
 Կտորները երկինք թըռան,
 Ու գընում են մինչև էսօր:

Ելաւ հօրից, կանգնեց ահեղ.
 Սարսափ կալաւ դե Մելիքին:
 —Դաւիթ, ասաւ, եկ դեռ էստեղ,
 Սեղան նըստենք... խօսենք կարդին...

—Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
 Դու տըմարդի, վախկոտ ու նենդ.
 Չուտ, զէնքըդ առ, հեծիր քու ձին,
 Դուրս եկ մէյդան, կըռիւ անենք:

—Կըռիւ անենք, ասաւ Մելիք,
 Իմն է միայն զարկն առաջին:
 —Քոնն է, զարկիր, կանչեց Դաւիթ,
 Գընաց, կեցաւ գաշտի միջին:

Ելաւ, կանգնեց Մըսրա-Մելիք,
 Իր գուրդն առաւ, հեծաւ իր ձին,

Քըչեց, գընաց մինչ Դիարբէքիր
Ու էնտեղից եկաւ կըրկին:

Երեք հազար լիդր էր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Եկաւ, զարկեց, կորաւ փոշում
Ու երեւաց երկրի գունդը:

— Երկիր քանդւեց, կամ ժածք եղաւ,
Ասին մարդիկ շատ աշխարքում:
— Չէ, ասացին, արնի ծարաւ
Հըսկաներն են իրար զարկում:

— Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,
Ասաւ Մելիք իրեն զօրքին:
— Կենդանի՛ եմ, ամպի տակից
Գոռաց Դաւիթ Մըսրա-Մելքին:

— Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ.
Տես, ճրտեղից հիմի կը գամ:
Ու վեր կացաւ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծաւ երկրորդ անգամ:

Երկրորդ անգամ քըչեց հալաբ
Ու բաց թողեց ձին հալաբից:
Բուք վերկացաւ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ գողաց թափից:

Եկաւ զարկեց, զարկի ձէնից
Մօտիկ մարդիկ ողջ խըլացան:
— Գընաց Դաւիթ Սասմայ տանից,
Դուժեց գոռող Մըսրայ արքան:

Կենդանի՛ եմ, գոռաց Դաւիթ.
Մին էլ արի—հերթն ինձ հասաւ:

Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Կանչեց Մելիքն ու վեր կացաւ:

Երբորդ անգամ հեծաւ իր ձին,
Գլնաց մինչև հողը Մըսրայ,
Ու էնտեղից՝ գուրզը ձեռին՝
Քըչեց, եկաւ Դաւթի վըրայ:

Եկաւ, զարկեց բոլոր ուժով,
Ծանր զարկով հըսկայական,
Փռչին ելաւ Սասմայ դաշտից,
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր
Կանգնեց փռչին ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բօթը տըւին Դաւթի մահուան:

Երբոր անցաւ երեք օրը,
Էն ամպի պէս կանգնած փռչում
Կանգնեց Դաւթի, ինչպէս սարը,
Գըրգուռ սարը մէզ-մըշուշում:

Մելիք, ասաւ, ո՞ւմն է հերթը...
Սարսափ կալաւ գոռ Մելիքին,
Մահուան գողը ընկաւ սիրտը,
Ու տապ արաւ գոռոգ հոգին:

Գլնաց, խորունկ մի հոր փորեց,
Իջաւ, մըտաւ վիհն էն խաւար,
Վըրէն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռընչալով՝ ելաւ տեղից
Էն առիւծի առիւծ որդին,

Իր ձին հեծաւ, ու փոթորկեց,
Խաղաց, շողաց թուր-կայծակին:

Առաջ վազեց՝ մազերն արձակ՝
Մեկքի պառաւ մայրը ջաղու.
— Դաւիթ, մազս առ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ինձ բաշխիր դու...

Երկրորդ անգամ թուրը քաշեց,
Էս անգամ էլ վազեց քուրը.
— Դաւիթ, եթէ կ'ուզես, կ'անշեց,
Իմ սըրտին զարկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասաւ,
Ելաւ Դաւիթ երրորդ անգամ.
— Էս մի զարկն ու Աստուծ, ասաւ,
Էլ մարդ չը գայ, պէտք է որ տամ:

Ասաւ, ելաւ ու փոթորկեց,
Թըռաւ, ցոլաց Դաւիթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց,
Ու ցած իջաւ թուր-կայծակին:

Անցաւ քառսուն գոմշի կաշին,
Անցաւ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրէշին,
Օխտը գաղ էլ գէնը գընաց:

— Կենդանի եմ, մին էլ արի,
Դոռաց Մեկք հօրի տակից.
Լսեց Դաւիթն ու զարմացաւ
Իրեն զարկից, թուր-կայծակից...

— Մեկք, ասաւ, թափ տուր մի քեզ...
Ու թափ տըւաւ Մեկքն իրեն,

Միջից եղաւ ճիշտ երկու կէս,
Մէկն ընկաւ դէմն ու միւսը դէն:

Էս որ տեսաւ Մըսրայ բանակ,
Ձուր կըտըրուեց ահ ու վախից.
Դաւիթ կանչեց.—Մի վախենաք,
Ականջ արէք հալա դեռ ինձ:

—Դուք ըռանչալար մարդիկ, ասաւ,
Ձուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցաւ,
Հազար ու մի հոգսեր ունէք.

Ի՞նչ էք առել նետ ու աղեղ,
Եկել, թափել օտար դաշտեր.
Ձէ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Ձանձրացել էք խաղաղ ու հաշտ
Ըռանչալարի օր ու կեանքից,
Թէ դըղուել էք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Էս մինը ձեզ խըրատ լինի.
Ինչպէս դըրկից ու բարեկամ՝
Առանց վընաս ու կենդանի
Բաց եմ թողնում ձեզ այս անգամ:

Դարձէք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրայ...
Բայց թէ մին էլ դէնք ու զօռով
Վեր էք կացել դուք մեզ վրայ,

Հորում լինին քառսուն դադ խոր,
Թէ ջաղացի քարի տակին,
Կենեն ձեր դէմ, ինչպէս էսօր,
Սասման Դաւիթ, թուր—կայծակին...

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Վերջ Ա. մասի)